

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՄԲՈՆ

ՀՈՂԻ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ,
ԿԱՐՏՈՖԻԼԻ ՏՆԿՄԱՆ ԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ
ՄԵՔԵՆԱՆԵՐ

ՄԵԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄԵՔԵՆԱՆԵՐ ԱՌԱՐԿԱՅԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱ-ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԳԱՄԿ-Ի ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ
ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԵՐԵՎԱՆ
ՀԱԱՀ
2015

ՀՏԴ 631.3 (072)

ԳՄԴ 40.72

Ե 597

Աշխատանքը հավանության է արժանացել գյուղատնտեսական մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից (16.01.2015թ., արձանագրություն 4):

Խմբագիր՝ Ս. ՄՍՐՅԱՆ

ԵՍՈՅԱՆ Ա.Ս.

Ե597 Հողի մակերեսային մշակության, կարտոֆիլի տնկման եվ բերքահավաքի մեքենաներ: Մեթոդական ցուցումներ գյուղատնտեսական մեքենաներ առարկայի լաբորատոր աշխատանքների կատարման, ուսումնա-արտադրական պրակտիկաների կազմակերպման, ԳԱՄԿ-ի խորհրդատուների և ֆերմերային տնտեսությունների համար/ Ա.Ս.ԵՍՈՅԱՆ, Ս.Վ ՀՈՎԱՀԱՆՆԻՍՅԱՆ, Մ.Ա. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ, Ա.Հ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, Հ.Դ. ՄԿՐՏՉՅԱՆ. – Եր.: 2015:-31 էջ:

Աշխատանքը նախատեսված է «Գյուղատնտեսության մեքենայացում», «Գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ» մասնագիտությունների ուսանողների, ԳԱՄԿ-ի խորհրդատուների և ֆերմերային տնտեսությունների համար:

ՀՏԴ631.3 (072)

ԳՄԴ40.72

ISBN 978-9939-54-818-0

© ԵՍՈՅԱՆ Ա.Ս. և ուրիշներ, 2015

© Հայաստանի ազգային ագրարային համալսարան, 2015

ՀՈՂԻ ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐ

ՑԱՔԱՆՆԵՐ

Ցաքաններն օգտագործվում են հողի վերին շերտը փխրեցնելու, հարթեցնելու, կեղևակալած շերտը քայքայելու, վարից հետո առաջացած կոշտերը մանրացնելու, մոլխոտերը ոչնչացնելու, սերմերը և պարարտանյութը հողով ծածկելու համար (նկ.1):



Նկ.1. Ատամնավոր ցաքանի ընդհանուր տեսքը:

Ատամնավոր ցաքանի տեխնիկական բնութագիրը


1	Ընդգրկման լայնությունը	0,95մ
2	Արտադրողականությունը 1 ժամ մաքուր աշխատանքի դեպքում	1,2հա
3	Աշխատանքային արագությունը	մինչև 12կմ/ժ
4	Մշակության խորությունը	մինչև 6սմ
5	Ատամների քանակը	20հատ
6	Ատամների բարձրությունը	160մմ
7	Գաբարիտային չափերը	1352×970×220 մմ
8	Զանգվածը	35կգ
9	Պահանջվող հզորությունը (1 ցաքանի համար)	5-9ձ.ուծ

Ցաքանները լինում են ատամնավոր և սկավառակավոր(նկ.2):

Ատամնավոր ցաքանի բանող օրգանն ատամն է: Քառակուսի հատվածքով ատամն աշխատում է երկնիստ սեպի սկզբունքով, սուր եզրի ուղղությամբ շարժվելիս, հպվելով կոշտին, փշրում է այն: Կլոր հատվածքի ատամով ցաքանն օգտագործվում է ցանքի համար նախապատրաստվող հողերում շաղացանով ցանված սերմերը ծածկելու նպատակով:

Դանակավոր ատամը միայն ճեղքում է հողը՝ կարգավորելով օդային ռեժիմը: Այն օգտագործվում է արոտավայրերի ու մարգագետինների բարելավման համար:

Ատամնավոր ցաքանը կազմված է երկայնական զիգզագ և ընդլայնական ուղիղ ձողերից, որոնց հատման կետում ամրացվում են ատամները (նկ.1, 2ա):



Նկ. 2. Հողի մակերեսային մշակության բանող օրգանների սխեմաներ. ա - ատամնավոր ցաքան, բ - սկավառակավոր ցաքան:

Զիգզագաձև շրջանակի վրա դասավորված ատամներից յուրաքանչյուրը պետք է ունենա իր հետքը, ինչպես նաև միջհետքային հեռավորությունները պետք է լինեն հավասար, և մեկ հետքով պետք է անցնի միայն մեկ ատամ, որպեսզի հողը չփռշիանա:

Մշակումից հետո հողի կոշտերը պետք է լինեն 5 սմ-ից ոչ մեծ, իսկ ակոսիկների խորությունը՝ 3-4 սմ-ից ոչ ավել:

Ըստ մեկ ատամի վրա ընկնող կշռի՝ զիգզագաձև ցաքանները լինում են ծանր, միջին և թեթև: Առաջին երկուսն ունեն քառակուսի հատվածքով, երրորդը՝ կլոր հատվածքով ատամներ:

Ծանր, ատամնավոր ցաքանի մեկ ատամի վրա ընկնող կշիռը 2-3 կգ է, մշակման խորությունը՝ մինչև 100 մմ (ԵՅՏԿ-1.0), միջին, ատամնավոր ցաքանի մեկ ատամի վրա ընկնող կշիռը՝ 1-2 կգ, մշակման խորությունը՝ մինչև 80 մմ (ԵՅՇՇ-1.0), թեթև, ցանքային ցաքանի մեկ ատամի վրա ընկնող կշիռը՝ 0,5-1 կգ, մշակման խորությունը՝ մինչև 60 մմ:

Զիգգագաձև ցաքանների շրջանակը կոշտ է, ցանցավոր և դանակավոր ցաքաններինը՝ ճկուն:

Անհարթ ռելիեֆի ցաքանման ժամանակ ճկուն շրջանակը պատճենահանում է դաշտի ռելիեֆը, ատամների թաղման խորությունը ստացվում է հաստատուն, ինչը բացառվում է կոշտ շրջանակով ցաքանի դեպքում:

Ճկուն շրջանակները հիմնականում օգտագործվում են թմբային եղանակով տնկված կարտոֆիլի դաշտերում հողի մակերևույթի կեղևակալած շերտը քայքայելու և մոլախոտերը ոչնչացնելու համար:

ԵՇՕ-4A –ն ցանցավոր ցաքան է, ունի շրջանակ, որին շղթաներով ամրացված են ցանցերը: Մշակման խորությունը կազմում է մինչև 80 մմ:

Քարքարոտ հողերի ցաքանման ժամանակ կոշտ ատամները շուտ են կոտրվում, ուստի օգտագործվում են զսպանակավոր կանգնակներ ունեցող ատամնավոր ցաքաններ (ԵՈՒ-8): Քարի հանդիպելիս ատամը շրջանցում է արգելքը և չի կոտրվում:



Նկ.3. Սկավառակավոր ցաքանի ընդհանուր տեսքը:

Սկավառակավոր ԵԺԻ ցաքանի տեխնիկական բնութագիր

1 Ընդգրկման լայնությունը

1540մմ


2	Արտադրողականությունը մաքուր աշխատանքի դեպքում	1 ժամ	1,23 հա/ժ
3	Աշխատանքային արագությունը		8կմ/ժ
4	Մշակության խորությունը		մինչև 12սմ
5	Սկավառակի տրամագիծը		560մմ
6	Սկավառակների քանակը		8հատ
7	Սկավառակների գրոհի անկյունը		25°
8	Գաբարիտային չափերը		1620×900×1130 մմ
9	Աշխատանքային թույլատրելի թեքությունը		մինչև 20°
10	Պահանջվող հզորությունը		39÷45ձ.ուժ

Սկավառակավոր ցաքանները լինում են թեթև և ծանր: Թեթև ցաքաններն իրենց հերթին լինում են դաշտային և այգեգործական(նկ. 3): Թեթև ցաքանի բանող օրգանը 450-560մմ տրամագծով սրված եզրով գնդային մակերևույթ ունեցող սկավառակ է: Սկավառակավոր դաշտային ցաքանը օգտագործվում է վարից հետո կոշտերը մանրացնելու, խոզանի երեսվարի, թույլ ճմակալած մարգագետինները բարելավելու համար: Այգեգործական ցաքանները կիրառվում են պտղատու ծառերի միջշարային տարածությունները մինչև 10 սմ խորությամբ մշակելու, իսկ ծանր ցաքանները՝ խամ և խոպան, կապակցված հողերի վարից հետո առաջացած կոշտերը մանրացնելու, ճահճային հողերը մշակելու, մարգագետինները բարելավելու, մոլախոտերի մնացորդները և պարարտանյութերը հողում թաղելու համար: Ծանր ցաքանները հողը մշակում են մինչև 20 սմ խորությամբ: Դրանց բանող օրգանը 450-560 մմ տրամագծով կտրտված, սրված եզրով գնդաձև մակերևույթ ունեցող սկավառակ է (նկ. 4.):

Սկավառակները հավաքվում են քառակուսի հատվածք ունեցող սոնու վրա: Դրանց միջհեռավորությունը պահպանվում է գատիչի միջոցով:

Սկավառակների խումբը կոչվում է մարտկոց, որն ընթացքի ուղղության նկատմամբ տեղադրվում է որոշակի գրոհի անկյան (∞) տակ:

Գրոհի անկյունը կարգավորվում է՝ 0-21°-ի սահմաններում ձգաձողերի երկարությունը փոփոխելով: Չոր և ամուր հողերի մշակման ժամանակ գրոհի անկյանը մեծացվում է, խոնավ և թեթև հողերի դեպքում՝ փոքրացվում: Փոքր անկյան դեպքում կոշտերի կտրման ունակությունը մեծանում է:



Նկ. 4. Սկավառակների տեսակներ, ա-հարթ եզրագծով, բ-կտրտված եզրագծով:

Հողի մեջ սկավառակների թաղման ճնշումը մեծացվում է՝ հատուկ արկղերում բեռ ավելացնելով: Սկավառակավոր ցաքանները, ի տարբերություն ատամնավոր ցաքանների, ավելի քիչ են կուտակում հողի կոշտեր և ավելի լավ են կտրում բուսական մնացորդները: Քարքարոտ հողերում սկավառակները չեն աշխատում:

ԿՈՒԼՏԻՎԱՏՈՐ



Նկ.5. Կուլտիվատորի ընդհանուր տեսքը:

Կուլտիվատորի տեխնիկական բնութագիր

1	Ընդգրկման լայնությունը	1800 մմ
2	Արտադրողականությունը 1 ժամ մաքուր աշխատանքի դեպքում	1,08 հա/ժ
3	Աշխատանքային արագությունը	6 կմ/ժ
4	Մշակության խորությունը	մինչև 16 սմ
5	Սլաքաձև ունիվերսալ թաթիկների քանակը	7 հատ
6	Գաբարիտային չափերը	1800×920×1200 մմ
7	Աշխատանքային թույլատրելի թեքությունը	մինչև 20°
8	Զանգվածը	220 կգ
9	Պահանջվող հզորությունը	28 ÷ 62 ձ.ուժ

Կուլտիվատորները նախատեսվում են հողի փխրեցման, մոլախոտային բուսականության ոչնչացման, պարարտանյութի մատուցման և ծածկման, ոռոգման ակոսների բացման, բուկլից կատարելու համար: Դրանք տրակտորի հետ ագրեգատավորվում են կցովի և կախովի տարբերակներով (նկ.5):

Ըստ նշանակության՝ կուլտիվատորները լինում են նախացանքային (համատարած մշակություն կատարելու համար) և հետցանքային (միջշարային մշակություն կատարելու համար):

Կուլտիվատորն ունիվերսալ է, եթե նախատեսված է մի քանի գործողություններ կատարելու՝ տարբեր լայնությամբ միջշարային տարածություններում աշխատելու և հողերի նախացանքային մշակության համար: Եթե կուլտիվացման գույքնթաց կուլտիվատորը նաև պարարտանյութ է մատուցում, կոչվում է բուսասնիչ: Շարքերում բույսերը նոսրացնելու համար միջշարային մշակության կուլտիվատորների վրա երբեմն տեղադրվում են պտտվող կամ ճոճվող դանակներ: Այդպիսի կուլտիվատորներն անվանվում են նոսրացուցիչ:

Համատարած կուլտիվացում կատարվում է հողը ցանքի համար նախապատրաստելու և մաքուր ցեղերի խնամքի նպատակով, հողը փխրեցվում է սերմի թաղման խորությամբ, ոչնչացվում են մոլախոտերը: Վարի խորությամբ հողը խորը փխրեցվում է առանց շրջման (չիզելացում):

Համատարած մշակությունը կատարվում է նախորդ մշակության ուղղությամբ կամ անկյան տակ՝ 9-15 կմ/ժ արագությամբ: Ընդ որում, մեծ արագության դեպքում դաշտն ավելի լավ է հարթեցվում և նպաստավոր պայմաններ են ստեղծվում ցանքի (տնկման) մեքենաների աշխատանքի համար:

Ցանքերի խնամքի ժամանակ կուլտիվատորով մշակվում են շարահերկ մշակաբույսերի միջշարային տարածությունները, կատարվում են փխրեցում, քաղհանում, սնուցում, բուկլից, ոռոգման ակոսների բացում: Միջշարային մշակության ժամանակ բույսի ցողունի մոտ մնում է չմշակված մակերես, որն անվանվում է բուսապաշտպան գոտի: Բուսապաշտպան գոտում հողի փխրեցման համար կիրառվում են ասեղնասկավառակավոր հողորագներ և ատամնավոր փխրիչներ:

Միջշարային մշակության կուլտիվատորները (KOH-2.8A, KPH-4.2) խմբավորվում են ըստ մշակվող մշակաբույսերի (եգիպտացորեն, կարտոֆիլ, շաքարի ճակնդեղ, արևածաղիկ): Կարտոֆիլի մշակության համար օգտագործվում են 2,4, 6 շարքանի, արևածաղիկ և եգիպտացորենի համար՝ 6, 8, 12 շարքանի կուլտիվատորներ:


Կուլտիվատորի ընդգրկման լայնությունն ընտրվում է շարքացանի և կարտոֆիլատնկիչի ընդգրկմանը համապատասխան:

Կուլտիվատորի թաթիկների տեսակները և դրանց բնութագրերը

Թաթիկները բաժանվում են հետևյալ խմբերի՝ քաղհանող (նկ.6), փխրեցնող, ունիվերսալ, ինչպես նաև սնուցող, բուկլից կատարող, ոռոգման ակոսներ բացող, թևաթաթ (նկ. 7):

Հարթահատիչ միակողմանի (նկ.6ա) և սլաքաձև (նկ. 6 բ) թաթիկները կիրառվում են մոլախոտերի արմատները մինչև 6 սմ խորությամբ կտրելու համար (առանց հողաշերտի էական տեղաշարժի): Հարթահատիչ թաթիկների մոտ փխրեցման (α) և դրվածքի (ε) անկյանները փոքր են՝ $\alpha=9-10^\circ$, $\varepsilon=15-18^\circ$: Փովածքի անկյունը կազմում է $2\gamma=56-70^\circ$: Այս պարամետրի արժեքով է պայմանավորվում նաև սահումով կամ առանց սահումի կտրման ռեժիմը:

Միակողմանի թաթիկները լինում են աջակողմյան և ձախակողմյան, որոնք կիրառվում են բուսապաշտպան գոտուն մոտ տարածությունը մշակելու համար: Դրանք կազմված են 1 կանգնակից, 2 վահանիկից և 3 ածելիից: Վահանիկը պահպանում է բույսը հողով ծածկվելուց: Դրա մակերեսի հորիզոնական պրոյեկցիան պետք է գտնվի բուսապաշտպան գոտու եզրագծի վրա: Միակողմանի աջակողմյան թաթիկը տեղակայվում է շարքի աջ կողմից, իսկ ձախակողմյանը՝ ձախից:



ա)

բ)

Նկ. 6. Հարթահատիչ թաթիկների տեսակներ.

ա.- միակողմանի, բ.- սլաքաձև:

Սլաքաձև հարթահատիչ թաթիկները (նկ.6բ) միակողմանի թաթիկների (նկ. 6ա) հետ կիրառվում են լայնաշար միջշարային և համատարած մշակության համար:

Սլաքաձև ունիվերսալ թաթիկները մոլախոտերի քաղհանման հետ մեկտեղ կատարում են հողի փխրեցում և հարթահատիչ սլաքաձև թաթիկներից տարբերվում են փխրեցման (α) ու հորիզոնի նկատմամբ տեղակայման (ε) անկյունների արժեքներով, ինչպես նաև քթամասից դեպի կանգնակն անցում կատարող մասով՝ $\alpha=16-18^\circ$, $\varepsilon=25-30^\circ$: Փովածքի անկյունը (2γ) կաչուն հողերի մշակության համար կազմում է $55-60^\circ$, իսկ ավազային հողերի մշակության համար՝ $75-80^\circ$: Սլաքաձև ունիվերսալ թաթիկները կիրառվում են զսպանակավոր ապահովիչներով՝ հողը մինչև 12-14 սմ խորությամբ (ինչպես համատարած, այնպես էլ միջշարային) մշակելու համար:

Փխրեցնող թաթիկները (նկ. 7) նախատեսված են հողը մինչև 22 սմ խորությամբ փխրեցնելու (առանց հալի ստորին շերտը մակերես բարձրացնելու) համար: Դրանք լինում են դրաձև, շրջվող, նիզակաձև և ատամնավոր:


Լայն կիրառություն ունեն դրաձև և շրջվող թաթիկները, որոնց հատկանշական կողմը փխրեցման (α) անկյան սահուն փոփոխությունն է ըստ բարձրության: Դրաձև թաթիկները (նկ.7ա) կիրառվում են կապակցված ամուր հողերը մինչև 16 սմ խորությամբ մշակելու համար: Դրանց լայնությունը կազմում է $b=20$ մմ, իսկ փխրեցման անկյանը՝ $\alpha_0=40^\circ$: Թողարկվում են երկու տարբերակով՝ թեթև և ծանր հողերում աշխատելու համար: Օգտագործվում են նաև որպես սնուցիչ օրգանների համար հողը ձեռքող դանակներ:

Շրջվող թաթիկները (նկ. 7բ) օգտագործվում են կոշտ կամ զսպանակավոր կանգնակներով: Կոշտ կանգնակների դեպքում հողի մշակման խորությունը հասցվում է 22-25 սմ-ի, զսպանակավոր կանգնակների դեպքում՝ 10-12 սմ-ի: Փովածքի անկյունը կազմում է $2\gamma=60-70^\circ$, ընդգրկման լայնությունը՝ $b=35-65$ մմ: Նախատեսվում են մոլախոտերի սանրման և հողի նախացանքային փխրեցման համար (մաշվելու դեպքում ենթարկվում են շրջման):

Նիզակաձև (նկ. 7գ) թաթիկներն օգտագործվում են զսպանակավոր կանգնակներով, ունեն նմանատիպ պարամետրեր, ավելի լավ են սանրում մոլախոտերը:

Զսպանակավոր ատամներով թաթիկները (նկ. 7 դ) կիրառվում են միջշարային բուսապաշտպան գոտիների հողը փխրեցնելու համար:

Թաթիկ-թնիկը (նկ. 7ե) հողի բարակ շերտով ծածկում է բուսապաշտպան գոտում եղած մուլախոտերի ծիլերը, որոնք օդի անբավարարության պատճառով ոչնչանում են: Կանգնակին ամրացված թաթիկն ունի կորագիծ մակերևույթ՝ սրված եզրագծով:



Նկ. 7. Կուլտիվատորի փխրեցնող և բուկլից կատարող (ակոսահան) բանող օրգաններ.

ա- դրածն փխրեցնող, բ- շրջվող թաթիկ, գ-նիզակաձև թաթիկ, դ- գսպանակավոր ատամներ, ե-թևաթաթ, զ-ակոսահան, է-ոռոգման ակոսներ բացող թաթիկ, ը-ասեղնասկավառակավոր հողուրագ:

Ակոսահան թաթիկը (նկ. 7զ) նախատեսված է ակոսի հատակի մուլախոտերի ոչնչացման, մշակաբույսերի ցողունների վրա փուխը հող լցնելու և այն շարային թմբերի (կարտոֆիլ) վրա հավասար շերտով բաշխելու համար: Ի տարբերության գուրանի իրանի՝ ակոսահան թաթիկն օգտագործվում է նախապես փխրեցված հողերը մշակելու համար: Աշխատում է 60-80 սմ լայնությամբ միջշարային տարածություններում, հողաշերտը չի շրջում, մշակում է մինչև 16 սմ խորություն, թմբի բարձրությունը ստացվում է մինչև 25 սմ:

Ոռոգման ակոսներ բացող թաթիկը (նկ. 7է) ձևավորում է մինչև 20 սմ խորությամբ ջրման ակոս և միաժամանակ հող է մտցնում պարարտանյութ:


Ասեղնասկավառակավոր հողուրագները (նկ. 7ը) կիրառվում են միջջրային տարածություններում և բուսապաշտպան գոտում հողի կեղևակալած շերտը փշրելու, առանց հողի տեղաշարժի՝ կոշտերը մանրացնելու համար:

Կուլտիվատորի կառուցվածքային առանձնահատկություններից է մշակման խորության կայունությանն ապահովելու համար նախատեսված անիվների առկայությունը: Այդ նպատակին է ծառայում նաև շրջանակին թաթիկների ամրացման եղանակների ընտրությունը, որը կարող է լինել կոշտ, ճկուն, շառավղային և քառոդակ: Կոշտ եղանակն օգտագործվում է զսպանակավոր թաթիկներն ամրացնելու համար: Մշակման խորության փոփոխականությունը նվազագույնի հասցնելու համար այս թաթիկներն ունեն S-աձև կառուցվածք:


Շառավղային միացումով (նկ. 8ա) թաթիկի տեղակայման անկյունը դաշտի մակերևույթի պատճենահանման ընթացքում չի մնում հաստատուն: Ելակետային դիրքում թաթիկները տեղակայվում են որոշակի անկյան տակ, արդյունքում մեծանում է փխրեցման անկյունը, ինչը ցանկալի չէ: Ի տարբերություն կոշտ միացումով թաթիկի՝ շառավղային միացումով թաթիկն ավելի լավ է պատճենահանում դաշտի մակերևույթը երկայնական և լայնական ուղղություններով:

Քառոդակ գուգահեռագիծ մեխանիզմը (նկ. 8բ) հնարավորություն է տալիս, անկախ մշակման խորության, հաստատուն պահել թաթիկի տեղակայման անկյունը: Մշակման խորությունն աշխատանքի ընթացքում սահմանափակվում է 9 պատճենահան անիվի շնորհիվ: Թաղման խորությունը կարգավորվում է թաթիկը բռնիչի մեջ տեղաշարժելու և սևեռելու միջոցով:

Նշված մեխանիզմները կազմված են 1 շրջանակից, 2 կանգնակից, 3 թաթիկից, 4 հենարանային անիվից, 5 երկբազուկ լծակից, 6 զսպանակից, 7 ձողից, 8 երասանակից, 9 պատճենահան անիվից, 10 լծակի սողանից, 11 օղակներից:



ա /



բ /

Նկ. 8 Կուլտիվատորների սեկցիաներ

ա – շառավղային մեխանիզմով, բ – քառօղակ մեխանիզմով:

ԿԱՐՏՈՖԻԼԱՍՆԿԻՉՈՒՄ-202

Կախովի, չորս շարքանի Ո-202 կարտոֆիլատնկիչը նախատեսված է յարովիզացված (ծլած) և ջարովիզացված (չծլած) կարտոֆիլի պլալարների շարային տնկման համար:

Կարտոֆիլատնկիչը ագրեգատավորվում է 14 կՆ (MT3-80-82 MT3-100-102), 30 կՆ (ՃT-75) դասի տրակտորների հետ:

Կարտոֆիլով կարտոֆիլատնկիչի բեռնավորումը կատարվում է ցանկացած ինքնաթափ տրանսպորտային միջոցներով:

2. Հիմնական տեխնիկական տվյալները և բնութագիրը

Աղյուսակ 1

Արժեքը	Չափման միավորը	Արժեքը
2.1 Նշանակման ցուցանիշները		
Արտադրողականությունը 1 ժ-ում	հա	1,26-2,4
Աշխատանքային արագությունը	կմ/ժ	4-10
Աշխատանքային ընդգրկման լայնությունը	մ	2,8
Կարտոֆիլի լցման համար բունկերի ընդհանուր տարողությունը	կգ	600
Սպասարկող անձնակազմի թիվը-տրակտորիստ	մարդ	1
Մեքենայի զանգվածը -կառուցվածքային -մեքենամասերով և գործիքներով	կգ կգ	760±3% 780±3%
Միջշարքային լայնությունը	սմ	70
Աշխատանքային օրգանների շարժահաղորդումը		Հենարանա- ընթացքային անիվից
2.2 Տեխնոլոգիական գործընթացի կատարման որակական		

ցուցանիշները		
Շարքում պալարների միջև միջին հեռավորությունը	սմ	20-40,5
Տնկման խորության սահմանները	սմ	6-14
2.3 Փոխադրելիության ցուցանիշները		
Տրանսպորտային վիճակում եզրաչափերը, ոչ ավել		
- երկարությունը	մմ	1600
-լայնությունը	մմ	3000
-բարձրությունը	մմ	1500
2.4 Աշխատանքային օրգանների բնութագիրը		
Բունկերի բեռնման բարձրությունը	մմ	450
Բեռնման գոտու ներքին լայնությունը	մմ	2750
Զանգվածային տարողությունը ոչ ավելի	կգ	600
Տնկող ապարատը		Էլևատորային
1 ապարատի վրա գդալիկների քանակը	հատ	30
Խոփի տեսակը		Մեպաձև՝ հողի մեջ խրման բութ անկյունով
Կախոցի երկարությունը	մմ	400
Ակոսածածկիչի տեսակը		Գնդաձև գսպանակված սկավառակներ
Սկավառակի տրամագիծը	մմ	400



Նկ. 1. Л-202 կախովի կարտոֆիլատնկիչի ընդհանուր տեսքը.

1- շրջանակ MHC 01.000, 2- շարժաբեր անիվ MHC 07.000, 3- բունկեր MHC 04.000, 4- ակոսածածկիչ MHC 06.000, 5- ձախ տնկողապարատ MHC 03.000, 6- տնկողապարատ MHC 02.000, 7- աջ տնկողապարատ MHC 03.000-01, 8- խոփիկ MHC 05.000:

3. Կարտոֆիլատնկիչի տեխնոլոգիական գործընթացը

3.1. Տնկիչի աշխատանքի վերաբերյալ ընդհանուր տվյալներ:


Տնկման խտությունը փոփոխվում է շրթայական փոխանցումը փոփոխելով, որը կատարվում է ցանող ապարատի լիսեռի վրա աստղանիվների բլոկը տեղաշարժելով:

3.1.1. Տնկիչի տեխնոլոգիական գործընթացը կատարվում է հետևյալ ձևով.

Ագրեգատի դաշտ հասնելուց հետո տրակտորի կախոցի մեխանիզմով տնկիչը բերվում է աշխատանքային դիրքի:

Տրակտորի հիդրոհամակարգով իջեցվում է բեռնման բունկերը: Կարտոֆիլով բեռնումը իրականացվում է ինքնաթափ տրանսպորտային միջոցով: Թույլատրվում է ձեռքով բեռնումը: Բունկերը աշխատանքային դիրք բարձրացնելուց հետո տրակտորը

սկսում է շարժվել և ոլորող մոմենտը հենարանային շարժաբեր անիվից շրթայական փոխանցման միջոցով փոխանցվում է տնկող ապարատին:



Նկ.2. Կարտոֆիլատնկիչի տեխնոլոգիական սխեման.

1-բունկեր, 2-սահափական, 3- սնուցող բունկեր, 4-տնկողապարատ, 5-խոփիկ, 6- խոփիկի կանգնակ, 7- ակոսաձածկիչ, 8-կլորողակ շղթա:

Կարտոֆիլի պալարները բեռնման բունկերից ինքնահոս կերպով մատուցվում են սնուցող բունկերին:

Տնկող ապարատի գոպիկները, դեպի վեր շարժվելով, բռնում են պալարները: Եթե գոպիկների պալարների շերտի միջոցով անցնելուց հետո նրանց մեջ հայտնվում են ավելորդ պալարներ, ապա թափահարիչը հետ է լցնում բունկեր: Գոպիկները դեպի ներքև շարժվելով պալարը խոփիկի ներքին խոռոչով ընկնում է ակոսի մեջ:

Տնկված պալարներով ակոսի ծածկումը կատարվում է ախոսաձածկիչներով (նկ.2):

3.2. Կարգավորման մեթոդները և միջոցները:

Սնուցող բունկերի լցման մակարդակը.

- Կարգավորիչ փականը բարձրացնելով և իջեցնելով, Խոփիկների ընթացքի խորությունը.
 - Խոփիկի կանգնակի վրա երիթակի վերատեղադրումով, Թաղմանխորությունընթմբիձևը.
 - Կլոր օղակ շղթայի երկարությունը փոփոխելով, Տնկման խտությունը.
 - Տնկող ապարատի լիսեռի վրա աստղանիվների բլոկը տեղաշարժելով, Ավելորդ պալարների թափահարման ինտենսիվությունը.
 - Շղթայի թափահարիչի հեղույսը ներպտուտակելով:
- 3.3. Տնկիչի կառավարման օրգանները.
Տնկիչը կառավարման լծակներևտոնակներչունի:

4. Տնկիչի բաղկացուցիչ մասերի աշխատանքը և կառուցվածքը

4.1. Շրջանակը MHC 01.000 իրենից ներկայացնում է եռակցված շրջանակ, որը ձևավորվում է առջևի, հետևի երկայնական և լայնական ձգաձողերով: Շրջանակը նախատեսված է տնկիչի բանող օրգանների տեղակայման համար:


Առջևի ձգաձողերի վրա ամրացված է տնկող ապարատը և ձգաձողը, հետևինի վրա բեռնման բունկերը:

4.2. Կարտոֆիլի համար նախատեսված հիմնական բունկերը MHC 04.000 ցանցավոր արկղի տիպի է, որի հատակը թեքված է դեպի սնուցիչը: Բունկերը կազմված է կողամասերից, որոնք գոդված են և եռակցված շրջանակի կենտրոնին:

4.3. Տնկող ապարատները MHC 02.000, MHC 03.000 և MHC 03.000-01 (սկ.3) բաղկացած են տանող (5) և տարվող (2) աստղանիվների բլոկից, սնուցող բունկերից, գդալիկներով շղթաներից, թափահարիչներից, պաշտպանիչից:

Հարակից լիսեռների եզրերը իրար հետ միացված են հողակապային փոխանցումով: Եզրային ապարատների տանող լիսեռների վրա տեղակայված են շարժաբերի տանող աստղանիվների բլոկը:

Տնկող ապարատները նախատեսված են ակոսի մեջ պալարները մատուցելու համար: Ապարատները միմյանցից տարբերվում են տանող աստղանիվի լիսեռի երկարությամբ:




Նկ.3 Տնկող ապարատ MHC 03.000, 6 MHC 02.000, MHC 03.000-01.

1- տնկող ապարատի հիմքը MHC 02.010, 2- տարվող աստղանիվների բլոկ MHC 02.020, 3- թափահարիչ MHC 02.050, 4- պատյան MHC 02.080, 5- տանող աստղանիվների բլոկ 03.010, 6-գրայիկ 02.003, 7- սնուցող բունկեր 02.421, 8- զսպանակ 02.606, 9- ձող 02.901, 10- շղթա ТРД-38-300-1-2-6-4 ГОСТ 4267-78:

4.4.Խոփիկը MHC 05.000 (նկ.4) իրենից ներկայացնում է հողի մեջ խորացման բութանկյունով եռակցված կառուցվածք:

Խոփիկը կալունակներով միացված է տնկող ապարատին: Կարգավորման անցքերով զսպանակած կանգնակը թույլ է տալիս կարգավորել տնկման խորությունը:



Նկ. 4. Խոփիկ MHC 05.000.

1,2- կողամաս MHC 05.401, 3- սեպ MHC 05.402, 4-ձգաձող MHC 05.010, 5- ձգաձող MHC 05.010-01, 6- խողովակ MHC05.801, 7-ականջ MHC05.404:

4.5. Ակոսածածկիչ բանող օրգանները MHC 06.000 (նկ.5) բաղկացած են շրջանակից, գնդաձև սկավառակներով կիսաստնիից, շղթայից, զսպանակից, խողովակից դուրս քաշովի կիսաստնիից, որի դեպքում ներպտուտակելով հեղույսը կարգավորվում են թմբի ձևը:



Նկ.5. Ակոսածածկիչ MHC 06.000.


1- սկավառակի կախոց MHC 06.010, 2- սոնի սկավառակի հետ միասին MHC 06.050, 3- սոնի սկավառակի հետ միասին MHC 06.050-01:

4.6. Ընթացքային շարժաբեր անիվը MHC 07.000 բաղկացած է սոնիից, իրանից, անիվից, ագույցից, տանող աստղանիվից: Ապահովիչ ագույցի վրա ճիգը կարգավորվում է մանեկներով, որով փոխվում է զսպանակների ճիգը:

4.7. Լիսեռլամբոդջական վիճակում MHC 08.020 բաղկացած է ապահովիչ ագույցից և տնկման խտության կարգավորման համար նախատեսված աստղանիվների բլոկից:

4.8. Էլեկտրասարքավորումը MHC 10.000 բաղկացած է հետին լապտերից, հաղորդալարից և վարդակային ներժանիից (вилкла):

4.9. Հիդրոհամակարգը MHC 09.000 (նկ.6) նախատեսված է բեռնման բունկեր բարձրացնելու, իջեցնելու համար:



Նկ 6. Հիդրավլիական սեխեմա.

1- տրակտորի հիդրոհամակարգ, 2-տրակտորի հիդրոհամակարգի ձախ արտածիչ, 3- բաժանարար ագույց, H 036.50.000, 4- եռաբաշխիչ MHC09.020, 5- հիդրոզևան, 6- գազանցք MHC 09.030, 7-դարձովի անկյունակի հեղույս KCM 44.605, 8- անկյունակ KCM 44.130, 9- տափօղակ H 036.28.004, 10-օղակ 2C38 ГОСТ 13940-86, 11- ճկախողովակ H 036.83.030, L=510 մմ, 12- ճկախողովակ H 036.83.090, L=1010 մմ:

5. Անվտանգության միջոցառումների ցուցումները

5.1. Տնկիչի բեռնումը պետք է կատարվի ակոսի մեջ: Չի թույլատրվում բեռնման բունկերը 600 կգ-ից ավել կարտոֆիլ լցնել:

5.2 Արգելվում է լրիվ բեռնված տնկիչը տեղափոխել տրանսպորտային դիրքում:

5.3 Եթե կարտոֆիլի բեռնման ժամանակ կամ շրջադարձերի վրա անհրաժեշտ է ագրեգատը հետընթացով վարել, ապա անհրաժեշտ է բարձրացնել խոփիկները:

5.4 Տնկիչի կամ դրա բեռնման բունկերի բարձրացման ժամանակ մարդկանց չի թույլատրվում լինել տնկիչի մոտ:

5.5. Տնկիչի փոխադրման դեպքում բեռնման բունկերի հիդրոմխոցների վրա պետք է տեղադրել ապահովիչ հենակներ:

5.6. Տնկիչի աշխատանքը MT3-80/82, MT3-100 տրակտորների հետ ագրեգատավորելիս առանց դրանց համալիրի լրացուցիչ բեռի արգելվում է:

5.7. Արգելվում է տնկիչը փոխադրել անսարք էլեկտրասարքավորումներով:

6. Աշխատանքին նախապատրաստումը

Տնկիչը գործարանից առաքվում է ոչ լրիվ հավաքված վիճակում:

6.1. Տրակտորը տնկիչի հետ աշխատանքի նախապատրաստումը:

6.1.1. Համոզվել, որ տրակտորի անվահետքը համընկնում է տնկիչի անվահետքի հետ:

6.1.2. Տրակտորի կախոցի շեղամույթերը ներքին ձգաձողերով անհրաժեշտ է միացնել եղանիկների առվակների միջոցով: Այդ դեպքում շեղամույթերի եղանիկները անհրաժեշտ է միացնել ձգաձողերին անցնելով դեպի վեր, որպեսզի ձգաձողի հետևի և առջևի վերջնամասերը միացնող մասերում չխանգարեն առվակի մեջ շեղամույթերի տեղաշարժմանը:

6.2. Տնկիչի կցումը տրակտորին:

6.2.1. Անհրաժեշտության դեպքում կարգավորել կարգավորիչ ձողի դիրքը՝ ապահովելով ձողի և շնիկի ատամի միջև մինիմալ բացակ: Կարգավորումը կատարվում է արտակենտրոնի շրջումով:

6.2.2. Հիդրոհամակարգով ներքև իջեցնել ինքնակցիչը, տրակտորը հետ տանել և կցիչը մտցնել փականի խոռոչի մեջ: Որից հետո կցիչը կախոցով բարձրացնել այնքան, մինչև որ շնիկի ատամը կառչի կարգավորիչի ձողին: Տնկիչի հիդրավլիկական փողրակները միացնել տրակտորի հիդրոհամակարգին:

6.2.3. Ազրեգատը տեղակայել հորիզոնական հարթակի վրա և անհրաժեշտության դեպքում վերակարգավորել տրակտորի կախոցի վերին ձգաձողը:

Տնկիչի կախոցի փականը կարգավորված վիճակում հորզոնական հարթակի վրա պետք է գտնվի ուղղահայաց դիրքում:

6.3. Տնկիչի նախապատրաստումը աշխատանքի և փորձարկումը:

Տնկիչը գործարանում արտադրվում է լրիվ նախապատրաստված վիճակում և աշխատանքի համար կարգավորված:

6.4. Միացնել վարդակի եղանիկը տրակտորի վարդակին և ստուգել էլեկտրասարքերի աշխատանքը:

7. Աշխատանքի հաջորդականությունը

7.1. Հողը նախապատրաստել ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան. Այն պետք է ունենա 6-25% խոնավություն և 7°C –ից ոչ պակաս ջերմություն, լինի փխրեցված, չպարունակի 150 մմ-ից ոչ մեծ քարեր:

7.2. Տնկանյութին ներկայացվող պահանջները:

Տնկանյութը տեսակավորել ֆրակցիաների 25-50, 50-80, 80-120 գանգվածով: Տնկանյութի մեջ չպետք է լինեն կողմնակի խառնուրդներ:

7.3. Աշխատանքի կազմակերպումը և անցկացումը:


Ագրեգատի բեռնումը կատարվում է ակոսում, այդ դեպքում տնկման ժամանակ տնկիչում գտնվող կարտոֆիլի գանգվածը չպետք է գերազանցի 600 կգ-ը:

7.4. Դաշտային կարգավորումները և տնկման որակի հսկումը:

Առաջին աշխատանքային ընթացքից հետո կարգավորել բունկերների լցման մակարդակը, վերջնականապես սահմանել պալարների տնկման նորման, կարգավորել խոփիկի ընթացքի խորությունը և պալարների թաղման խորությունը:

7.4.1. Մնուցող բունկերի լցման մակարդակը կարգավորվում է հիմնական բունկերի սահափականը վերև կամ ներքև անելով: Դրա համար թուլացվում է մանեկը և սահափականը տեղակայվում է անհրաժեշտ բարձրության վրա:

7.4.2. Պալարների տնկման նորմայի սահմանման համար օգտվել տնկման նորմայի թիվ 2 աղյուսակից (նկ.7):



Նկ.7 Շարժաբերի կինեմատիկական սխեման:

Աստղանիվի ատամների թիվը				Շարքում պալարների միջև հեռավորությունը, սմ	Տնկման խտությունը, հազ.հատ./հա
Z ₁	Z ₂	Z ₃	Z ₄		
23	18	25	18	20,0	71,5
			20	22,0	65,0
			22	24,5	58,4
			25	27,5	52,0
		17	18	29,5	48,5
			20	32,5	44,0
			22	36,0	39,7
			25	40,5	35,3

7.4.3. Խոփիկների ընթացքի խորության ստուգման համար գոնի սկզբից 10-15 մ հեռավորության վրա ագրեգատը կանգնեցնել, զգուշորեն բացել ակոսը, պալարները տեղից չշարժելով՝ չափել պալարի վերին մասից մինչև թմբի բարձունքը եղած հեռավորությունը:

Անհրաժեշտության դեպքում խոփիկների ընթացքի խորության փոփոխման համար տեղափոխել երթակը սեղմող ձողի վերին կամ ներքին անցքի մեջ ամրացնել:

7.4.4. Պալարների թաղման խորությունը կարգավորել՝ ակոսաձածակիչի շղթայի երկարությունը փոփոխելով:

Կարգավորման ցուցանիշները

Անվանումը	Չափման միավորը	Արժեքը
Շերեփ-անուցիչում պալարների շերտի բարձրությունը	մմ	200-250
Տնկման խորությունը	մմ	60-140
Պալարների տնկման նորման	հազ.հատ/հա	35-71

Ընթացքային անվադողում ճնշումը	կգու/սմ ²	1,4-1,6
Ապահովիչ ագույցի պտտող մոմենտը	Նմ	75

8. Հնարավոր թերությունները և դրանց վերացման մեթոդները

Աղյուսակ 4

Թերությունները, արտաքին դրսևորումները	Վերացման մեթոդները, անհրաժեշտ կարգավորումները և փորձարկումը
<p>1. Պալարների անհավասարաչափ մատուցումը սնուցող բունկերի մեջ:</p> <p>1.1 Կեղտոտ տնկանյութի օգտագործումը:</p> <p>2. Գդալիկները վատ են բռնում պալարները:</p> <p>2.1. Նայել 1 կետ</p> <p>2.2 Գդալիկների կպումը:</p> <p>3. Գդալիկները վերցնում են երկու կամ ավելի պալարներ:</p> <p>3.1. Մնուցող բունկերների գերլցումը:</p> <p>4. «Երկուսների» մեծ քանակը:</p> <p>4.1. Թափահարիչը չի տեղահանում ավելորդ պալարները գդալիկից:</p> <p>5. Մեծ թվով բացթողումները:</p> <p>5.1. Թափահարիչը տեղահանում է բոլոր պալարները:</p> <p>6. Ապահովիչ ագույցի գործարկումը:</p> <p>7. Գդալիկի և հատակի, գդալիկի և պաշտպանիչի միջև քարերի սեպումը:</p>	<p>Օգտագործել մաքուր տնկանյութ, սիստեմաբար մաքրել կեղտից հիմնական բունկերը:</p> <p>Պարբերաբար մաքրել գդալիկները</p> <p>Իջեցնել հիմնական բունկերի սահափականները 20-30 մմ-ով:</p> <p>Թափահարիչի հեղույսը ձգել 1-2 պտույտ:</p> <p>Թափահարիչի հեղույսը թուլացնել 1-2 պտույտ:</p> <p>Հեռացնել քարերը և թույլ չտալ, որ դրանք հայտնվեն տնկանյութի մեջ:</p> <p>Ստուգել խոփիկների տեղակայումը, անհարթ մակերևույթ ունեցող դաշտերում</p>

8. Տնկման խորության անհվասարաչափությունը:	չաշխատել, տնկումը կատարել միայն տրակտորի կախոցի հիդրոմխոցի լողացող դիրքում:
---	---

9. Տեխնիկական սպասարկումը

Կարտոֆիլատնկիչի տեխնիկական սպասարկումը պետք է կատարել ինչպես շահագործման, այնպես էլ պահպանման ժամանակ:

9.1. Տեխնիկական սպասարկման դեպքում կատարվող աշխատանքների ցուցակը:

Աղյուսակ 5

Աշխատանքի բովանդակությունը	Տեխնիկական պահանջները
Զննման և աշխատանքի ընթացքում տեխնիկական սպասարկում	
<p>Մեքենան մաքրել փոշուց և կեղտից կոնսերվացվող քսայուղերով:</p> <p>Զննել և անհրաժեշտության դեպքում ձգել աշխատանքային օրգանների միացումները, փոխանցումները, ընթացքային մասը:</p> <p>Զննել և անհրաժեշտության դեպքում վերակարգավորել շարժաբեր մեխանիզմները:</p> <p>Անհրաժեշտության դեպքում յուղել մեքենայի հանգույցները և դետալները:</p> <p>Ստուգել մեքենայի բաղկացուցիչ մասերի և դետալների միացման հուսալիությունը:</p>	<p>Պտուտակային միացումները պետք է միշտ ձգված վիճակում լինեն:</p> <p>Շղթայի տանող ճյուղի ճկվածքը չպետք է գերազանցի աստղանիվների կենտրոնների միջև եղած հեռավորության 3%-ը:</p> <p>Աղմուկի ընդհանուր ֆոնի վրա չպետք է լինի թխկոխկոց:</p>

10. Պահպանման կանոնները

10.1. Մեքենան պետք է պահպանել հատուկ նախապատրաստված շենքում կամ բաց հարթակի վրա կոշտ ծածկոցով:

10.2. Տնկիչը պահպանման տեղակայման դեպքում անհրաժեշտ է մաքրել լիողից, բուսական մնացորդներից:

Մեքենան երկարաժամկետ պահպանման դեպքում բացի վերը նշվածից անհրաժեշտ է.

- մեքենան լվանալ,
 - մեքենան տեղակայել կանգնակների վրա,
 - հանել այն դետալները և հանգույցները, որոնք ենթակա են պահեստում պահպանման,
 - տնկիչի բոլոր զսպանակները թուլացնել,
 - տնկիչի վրայից հանել վռանահոլովակավոր շրթաները (տնկող ապարատինը գդալիկների հետ միասին),
 - խոփիկի աշխատանքային մակերևույթները, գնդային սկավառակները, շրթայավոր փոխանցման աստղանիվները (բացի տնկող ապարատի աստղանիվից), պարուրակները և այլ չներկված մակերևույթները պատել ՍՊԿ կամ K-14 քսայուղերով,
 - թուլացնել ընթացքային անիվներում օդի ճնշումը:
- Կարգավորման ցուցանիշները

Աղյուսակ 6

Անվանումը	Չափման միավորը	Արժեքը
Մնուցող շերտի փոստ պալարների շերտի բարձրությունը	մմ	200-250
Տնկման խորությունը	մմ	60-140
Պալարների տնկման նորման	հազ.հատ/ հա	35-71
Ընթացքային անվաղողերում ճնշումը	կգու/սմ ²	1,4-1,6
Ապահովիչ ագույցի ոլորող մոմենտը	Ն.մ	75

11. Տարան և փաթեթավորումը

Տնկիչը սպառողին է մատուցվում հավաքված վիճակում:

Տեխնիկական փաստաթղթերը դրված են պոլիէթիլենային թաղանթի մեջ և կպցված է մեքենային: Համալրող դետալները փաթեթավորում են և տեղադրում բունկերի մեջ:

12. Տեղափոխումը

Տնկիչը երկար հեռավորությունների վրա տեղափոխում են երկաթգծային կամ ավտոմոբիլային տրանսպորտով:

12.1.Տնկիչի փոխադրման համար լրացուցիչ աշխատանքներ չեն պահանջվում:


12.2. Բեռնման տեղերը ներկվում են մեքենայի հիմնական գույնից տարբերվող գույնով:

4U-2 ԿԱՐՏՈՖԻԼԻԱՔԱՆԴԻՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ

4U-2 փոխադրիչային կարտոֆիլաքանդիչը նախատեսված է երկու շարքից կարտոֆիլը քանդելու, պալարները հողից անջատելու և դաշտի մակերևույթին փռելու համար հետագայում հավաքելու և փոխադրամիջոցի մեջ լցնելու համար (նկ.1):

Այն նախատեսված է թմբային, հարթ և կիսաթմբային եղանակով մշակված, 70սմ միջշարքային հեռավորությամբ երկու շարքից կարտոֆիլը հավաքելու համար:


Կարտոֆիլաքանդիչը կախովի է և ագրեգատավորվում է 1,4 դասի տրակտորների հետ: Կարտոֆիլաքանդիչը բաղկացած է ակտիվ գործողության ատամնավոր խոփիկներից (1), շղթայաձողավոր փոխակրիչից (2), ընթացքային անիվից (4), պասիվ կողապատերից (8), գանձիչից (7), շղթայավոր փոխանցումից (5), թափահարիչներից (3), կախոցից (6):



Նկ.1 4U-2 կարտոֆիլաքանդիչի ընդհանուր տեսքը.

1-ատամնավոր խոփիկ, 2-շղթայաձողավոր փոխակրիչ, 3-թափահարիչներ, 4- ընթացքային անիվ, 5-շղթայավոր փոխանցում, 6-կախոց, 7-գանձիչ, 9-պասիվ կողապատեր:

Պասիվ կողապատերը (8) ակտիվ գործողության ատամնավոր խոփի (1) զուգակցումով բացառում են հողաշերտի կուտակումները մեքենայի մուտքի մասում (նկ. 1,2):



Նկ.2. 4U-2 կարտոֆիլաքանդիչի տեխնոլոգիական սխեման.

1-ատամնավոր խոփիկ, 2- շղթայաձողավոր փոխակրիչ, 3-թափահարիչներ, 4- ընթացքային անիվ:

Բանող օրգանները շարժահաղորդումը ստանում են տրակտորի հզորության անջատման լիսեռից կարդանային փոխանցումով:

Տեխնոլոգիական գործընթացը կատարվում է հետևյալ կերպ. ագրեգատի շարժման ընթացքում ատամնավոր խոփը (1) որոշակի խորությամբ քանդում է երկու հարևան շարքերը և

հողաշերտը մատուցում շրթայաձողավոր փոխակրիչին (2), ընդ որում՝ այն շարժվում է ավելի մեծ արագությամբ, քան կարտոֆիլաքանդիչը, ինչի արդյունքում փոխակրիչ փոխանցվող հողաշերտն ինտենսիվորեն մանրվում է, և հեշտանում է պալարների առանձնացումը:

4U-2 կարտոֆիլաքանդիչի հիմնական տեխնիկական բնութագիրը

Աղյուսակ 1

Անվանումը	Արժեքը
Ընդգրկման լայնությունը,մ	1,5
Զանգվածը, կգ	600
Արտադրողականությունը, հա/ժ	0,33-0,54
Խոփերի ընթացքի խորությունը, մմ	200-250

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кленин Н.И., Егоров В.Г. Сельскохозяйственные и мелоративные машины. –М.: Колос, 2003
2. Тарасенко А.П., Солнцев В.Н. и др. Механизация и электрификация сельскохозяйственного производства. –М.: Колос, 2003.
3. Юнусов Г.С., Максимов И.И., Михеев А.В., Смирнов Н.Н. Сельскохозяйственные машины: Учебное пособие. - Йошкар-Ола: Мар. гос. ун-т, 2009. - 152 с.
4. Инструкция по эксплуатации Л-202 картофелесажалки, 2014г.
5. Инструкция по эксплуатации 4U-2 картофелекопателя, 2014г.